ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ԱՌՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Արդի պայմաններում քաղաքական մասնակցությունը ժողովրդավարական վարչակարգի և քաղաքացիական հասարակության կայացման առանցքային գրավականն է: Քաղաքացիների կամարտահայտման ձևը ժողովրդավարական վարչակարգի գործառումն է, որի միջոցով տեղի է ունենում հասարակության քաղաքական կյանքին քաղաքացիների մասնակցությունը: Քաղաքացիների ներգրավվածությունը քաղաքական որոշումների ընդունման գործընթացին հիմնականում դրսևորվում է ընտրություններին մասնակցությամբ, սակայն ժողովրդավարական հասարակարգերում լինելով քաղաքական մասնակցության ապահովման գործընթաց՝ այն ամբողջությամբ չի արտահայտում քաղաքացիների մասնակցությունը:

Նշենք՝ ինչպես նախկինում, այնպես էլ հիմա քվեարկությունները քաղաքացիների ձայնը լսելի դարձնելու միջոց են, բայց հասարակության փոխակերպման արդյունքում հետզհետե ընդլայնվում են նաև ոչ կոնվենցիոնալ մասնակցային գործողությունները, ինչը հասարակության քաղաքացիական գիտակցության կերպափոխման արդյունք է[1]: Այսինքն՝ հասարակարգերի արդիականացման փուլում ավանդական մոդելները մեծ նշանակություն են ձեռք բերում, երբ քաղաքական մասնակցության նոր ձևեր են ներդրվում: Մասնավորապես, քաղաքական մասնակցության ոչ կոնվենցիոնալ տեսակներից լայնորեն տարածված և ներկայումս էլ կիրառելի են քաղաքացիական անհնազանդությունները, բողոքները, հավաքները, ցույցերը և կամավոր այլ գործողություններ: Բացի այդ, քաղաքացիները ներգրավվում են նաև սոցիալական, հանրային և այլ խնդիրների լուծմանը միտված քաղաքացիական տարբեր նախաձեռնությունների գործողություններին, որոնք էլ կարող են հետագայում վերածվել քաղաքական նախագծերի[2]: Ըստ Վ. Լամի՝ քաղաքական մասնակցությունը պետք է ընկալվի որպես գործողությունների այնպիսի ամբողջություն, որը ներառում է ինչպես կառավարությանը պահանջներ ներկայացնելու, այնպես էլ նրան աջակցելու օ-

[1] Տե՛ս **Siber I.,** Interest in elections and electoral participation, Faculty of Political Science, University of Zegreb, Vol. 41, 2004, № 5, էջ 3:

[2] Տե՛ս **Bergstrom L.,** Political participation: A qualitative study of citizens in Hong Kong, Karlstad University, 2006, էջ 7-8:

ինական և տարերային քայլեր[3]:

Համաշխարհայնացման պայմաններում առանց քաղաքացիների՝ իրենց իրավունքների ընկալման և իրացման հնարավոր չէ պատկերացնել քաղաքացիավարական ժողովրդաիշխանության[4] կայացումը: Յուրաքանչյուր ոք հասարակական հարաբերությունների ցանկացած ոլորտում պետք է արտահայտի իր համոզմունքները և դառնա դրանք կրողը[5]: Գիտակցված մասնակցային գործընթացը քաղաքացիավարական[6] արդի հասարակարգի կայացման ուղենիշն է, երբ հասարակության մեջ առկա խնդիրների լուծման անմիջական հաղորդակիցն է դառնում պետության քաղաքացին, իսկ պետությունն էլ իր գործողություններով հաշվետու է նրա առջև:

Նորանկախ ՀՀ-ում քաղաքական համակարգի փոխակերպման գործընթացը սկիզբ դրեց ժողովրդավարության անցման գործընթացին, որը հանգեցրեց հասարակական-քաղաքական կյանքի արմատական վերափոխման: Որդեգրելով ժողովրդավարացման ուղին՝ ՀՀ-ում ներդրվեցին իրավական և սոցիալական պետություն կառուցելու ընթացակարգերը, ինչպես նաև նպատակ հռչակվեց քաղաքացիական հասարակության կայացումը: Քաղաքական որոշումների ընդունման գործընթացը պահանջում էր մասնակցային այնպիսի մշակույթի ձևավորում, որը կհամապատասխաներ ժողովրդավարության չափանիշներին և կնպաստեր ժողովրդաիշխանության իրացմանը:

Ժողովրդավարական քաղաքական կառավարման համակարգի կայացման և քաղաքացիական հասարակության համար առանցքային նշանակություն ունեցող մասնակցային մշակույթի իրագործման համար կարևոր է որոշակի ընթացակարգերի ներդրումը, ինչպիսիք են, օրինակ, ժողովրդավարական ընտրությունների կազմակերպումը, լեգիտիմ իշխանության առկայությունը, իշխանություն-ժողովուրդ երկխոսութային մշակույթի ամրապնդումը հասարակության մեջ:

Քաղաքական գործընթացներում մարդկանց ներգրավվածությունը միանշանակ չէ: Այսպես, Ջ. Էկմանը և Ե. Էմնան նշում են, որ հասարակության մի մասը ակտիվ մասնակցում է քաղաքական կյանքին, նրանք առավելագույն չափով հետաքրքրված են քաղաքական գործընթացներով, իսկ ոմանք էլ ո՛չ ակտիվ են, ո՛չ պասիվ («չեզոք»)[7]:

---

[3] Տե՛ս **Lam W. M.,** Alternative understanding of political participation: challenging of the myth of political indifference in Hong Kong, International Journal of Public Administration, 2003, Vol. 26, https://www.tandfonline.com/doi/abs/10.1081/PAD-120019232, հասանելի՝ 08.07.2020:

[4] Տե՛ս **Ալեքսանյան Ա. Ս.**, Դեմոկրատիայի ցիվիլիարխիկ չափման մասին // «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2019, № 2 (29), էջ 52-60:

[5] Տե՛ս **Соколов А.,** Современные институты молодежной политики в Европе: история становления и развития, Вестник международных организаций, 2009, № 1 (23), էջ 84:

[6] Տե՛ս **Ալեքսանյան Ա. Ս**., նշվ. աշխ., էջ 52-60:

[7] Տե՛ս **Talo C., Mannarini T.,** Measuring participation: Development and validation the

Արդի դարաշրջանի մասնակցային գործողությունների շարքում ուրույն տեղ ունի նաև ցանցային մասնակցությունը: 20-րդ դարավերջին տեղեկատվական հեղափոխությամբ, ցանցային և հաղորդակցական նոր տեխնոլոգիաների ի հայտ գալով սկիզբ դրվեց տեղեկատվական դարաշրջանի մեկնարկին: Ներկայումս ցանցային տեխնոլոգիաների կիրառումը ոչ միայն թույլ է տալիս որոշակի գործողություններ ավելի հեշտ և արագ կատարել, այլև նպաստում է քաղաքացիների ձեռնհասության մակարդակի բարձրացմանը: Բացի այդ, դա պետական և հասարակական տարբեր կառույցների հրապարակայնության և հաշվետվողականության սկզբունքներն է ապահովում, ինչը քաղաքացիական հասարակության և քաղաքացիական մասնակցության դրսևորման առանցքային գործոններից է: Տեղեկատվական գործառույթի միջոցով հասարակության՝ քաղաքական կյանքի նկատմամբ հետաքրքրության շրջանակը ավելի է ընդլայնվում, մեծ նշանակություն է տրվում համացանցային աղբյուրների միջոցով նաև հանրային հարաբերությունների տարբեր ոլորտներում ձեռքբերումների ու բացթողումների հրապարակայնության և հաշվետվողականության ապահովմանը: Ասվածի վառ օրինակը ՀՀ-ում տեղի ունեցած «թավշյա հեղափոխությունն» էր, որը աննախադեպ էր նաև թվային տեխնոլոգիաների կիրառման առումով: Սովորական քայլերթով տրված հեղափոխության մեկնարկը կարճ ժամանակահատվածում համալրվեց հազարավոր համախոհներով, շարժմանը միացան բազմաթիվ քաղաքացիական նախաձեռնություններ, որոնք ներկայումս ակտիվ քաղաքական գործունեություն են ծավալում իշխանական աստիճանահարթակում: Ուստի բնականոն ճանապարհով, առանց բռնության աննախադեպ հաջողություն գրանցելը, այդչափ համախոհներ ձեռք բերելը նախևառաջ ճիշտ կազմակերպված միջոցառումների արդյունք էին, որոնցում իրենց հատկանշական ազդեցությունն ունեին ցանցային տեխնոլոգիաները: Այսպես, Ն. Փաշինյանի կողմից ուղիղ եթեր հաճախակի մտնելը ոչ միայն ապահովում էր հասարակության հետ անմիջական կապը, որը հավատի և վստահության խորացման գրավական էր, այլև կարևոր տեղեկատվությունը շատ արագ, առանց կեղծվելու, առանց խմբագրական միջամտությունների տեղ հասցնելու գործոն դարձավ: Այս ամենին հաջորդեց բազմաթիվ թռուցիկների, տեսահոլովակների տարածումը սոցիալական դաշտում: Թվային տեխնոլոգիաների միջոցով հայաստանյան գործողություններին մեծ մասնակցություն ունեցավ նաև հայկական սփյուռքը: Ուստի ժամանակակից հասարակարգերի համար որքանով կարևոր է ցանցային մասնակցության դրսևորումը, այնքանով էլ գերակա խնդիր է դառնում տեղեկատվական անվտանգության ապահովումը: Քանի որ արդի դարաշրջանում «աշխարհ առանց

participatory behaviors scale, Social indicators research, September 2014, էջ 5:

սահմանների» սկզբունքը ավելի է մեծացնում պետությունների համար վտանգը՝ ի հայտ բերելով տեղեկատվական-հաղորդակցային հարթակը սահմանափակող, ազգային անվտանգության սպառնալիք հանդիսացող վտանգներ (կիբերահաբեկչություն, կիբերհանցագործություն), հետևողական պետական վերահսկողության միջոցով հարկավոր է դրանց կանխարգելման և հակազդման միջոցներ ձեռնարկել:

Հասարակական-քաղաքական համակարգի մյուս դերակատարների հետ քաղաքացիական հասարակության ինստիտուտների լիակատար փոխգործակցությունը աստիճանաբար հանգեցնում է մասնակցության ինստիտուցիոնալացմանը: Այսինքն՝ ինստիտուտներից յուրաքանչյուրը, համագործակցելով հասարակական համակարգի մյուս տարրերի հետ, ապահովում է քաղաքակիրթ քաղաքացիական հասարակության հատուկ որակներ, ինչի միջոցով հնարավոր կլինի իրական հիմքերի վրա դնել քաղաքացիական մասնակցության կառուցակարգերը[8]: Եթե քաղաքական համակարգը ավելի բաց և մրցակցային է, ապա նրա ինստիտուցիոնալ միջավայրը մասնակցության ավելի մեծ հնարավորություն է տալիս, ավելի հմուտ քաղաքական դերակատարներ են մուտք գործում քաղաքական աստիճանահարթակ և արդյունավետ կառավարում իրականացնում: Նմանատիպ քաղաքական համակարգերի շրջանակներում կառավարությունը արդյունավետորեն գործառում է. մարդկանց շահերն ու պահանջմունքները բավարարվում են, և հանրային ծառայությունների որակը բարձրանում է: Աստիճանաբար անցում է կատարվում ավելի գործուն և անկախ պետական կառավարման՝ իրավասու և փորձառու պետական ծառայողների, վստահելի կառավարության և քաղաքական գործիչների միջոցով[9]: Հատկանշական է այն կարևոր դերակատարումը, որ քաղաքական մասնակցությունն իրականացնում է հասարակարգերի վերափոխման գործընթացում: Նույնիսկ սոցիալ-տնտեսական բարդ պայմաններում գտնվող երկրներում կարող է ժողովրդավարական արդյունավետ կառավարում իրականացվել, եթե իրավական բոլոր հնարավորություններն ապահովվում են հանրության մասնակցության համար: Աշխարհաքաղաքական տարբերվող պայմաններ և ազգային առանձնահատկություններ ունեցող հասարակարգերը պետք է ընտրեն այն լուծումներն ու ռազմավարությունները, որոնք համապատասխանում են իրենց քաղաքական մշակույթին: Միայն այդ դեպքում վերջիններս կարող են ձևավորել և կայացնել ժողովրդավարական ինստիտուտները և ամրապնդել մրցունակությունը: Այսպիսով, հասարակության սո-

---

[8] Տե՛ս **Najam A.**, The four Cs of Government-Third Sector Relations: Cooperation, Confrontation, Complementarity, Cooptation, Sustainable Development Policy Institute (SDPI), Research report series, № 25, Pakistan, 2000, էջ 1:

[9] Տե՛ս "Enabling environments for civic engagement in PSRP countries (ARVIN)", Social development notes. № 82, March 2003, էջ 3:

ցիալականացումը տեղի է ունենում կատարվող փոփոխությունների և ժողովրդավարական ռեժիմների վրա ազդելու հետևանքով[10]: Ըստ Գ. Ալմոնդի՝ «քաղաքական սոցիալականացումը ոչ միայն մեզ պատկերացում է տալիս հասարակության մեջ քաղաքական մշակույթի և ենթահամակարգերի կառուցվածքի մասին, այլև բացահայտում է հասարակության սոցիալականացման գործընթացներում այն ուղղությունը, որտեղ որոշակի որակներ և տարրեր են պահպանվում կամ փոփոխվում»[11]:

ՀՀ-ում 2018 թ. ապրիլ-մայիս հավաքներին մասնակցությամբ մեր հասարակությունն արժևորել էր փոփոխությունների հասնելու պայքարի ուղին՝ կազմակերպվածության և միասնականության միջոցով: Իսկ քաղաքակիրթ պետության գոյությունը հետագայում պայմանավորված է սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմամբ, որոնք էլ նվազեցնելու կամ վերացնելու են հասարակության զարգացումը խոչընդոտող հանգամանքները՝ չհանգեցնելով բնակչության լայն շերտերի դժգոհություններին և քաղաքական դերակատարների հանդեպ վստահության կորստին:

Միևնույն ժամանակ ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանի գլխավորած կառավարությունը կանգնած է մարտահրավերի առաջ. թե որքանով կհաջողի պահպանել և հետագա ընտրությունների միջոցով ամրագրել իշխանության դիրքերը, պայմանավորված է հետագա գործունեությամբ, որը պետք է ներառի հասարակական-քաղաքական կյանքի յուրաքանչյուր ոլորտի հետևողական ուսումնասիրությունից մինչև պետական կառավարման ապարատի արդյունավետ վերափոխում: Պետական քաղաքականության արդյունավետության կարևորագույն չափանիշներից է կադրային ճիշտ քաղաքականությունը՝ հիմնված մասնագիտական բարձր պատրաստվածության և հմտությունների վրա: Ինչպես նշել է Ե. Շեստոպալը, հասարակական-քաղաքական համակարգը կայունացնելու և զարգացնելու համար անհրաժեշտ է այն համալրել նոր կադրերով: Քաղաքական ընտրանին առանցքային նշանակություն ունի համակարգի կայուն գործառության և զարգացման տեսանկյունից, քանի որ ինչպիսին ընտրանու որակն է, այնպիսին նրա կառավարումն է[12]: Ուստի անհրաժեշտ է համակարգը համալրել ոչ միայն պետական մտածողությամբ, հանրային շահը անհատականից

---

[10] Տե՛ս **Nekola M.,** Political participation and governance effectivesness: Does participation matter?, January 2006, Charles University in Prague, էջ 10:

[11] **Almond G.,** "A Functional Approach to Comparative Politics," in Almond G., and Coleman J., (eds.), The Politics of Developing Areas. Princeton, NJ: Princeton University Press: 1960, էջ 26-33 (տե՛ս **Owen D.,** "Political Socialization in the Twenty-first Century". Paper presented for presentation at "The Future of Civic Education in the 21st Century" conference cosponsored by the Center for Civic Education, James Madison's Montpelier, September 21-26, 2008, էջ 1):

[12] Տե՛ս **Шестопал Е.**, Политическая психология: Учебник для вузов, М., ИНФРА-М, 2002, էջ 130:

վեր դասող անհատներով, այլև պատասխանատու և բարձր պաշտոնների նշանակել քաղաքական սոցիալականացման որոշակի փուլ անցածներին:

Ի հավելումն վերոհիշյալի՝ կարող ենք նշել, որ ժողովրդավարության անցման ամենաարդյունավետ ուղին համարվում է «պակտային համաձայնությունը», որի պարագայում քաղաքական էլիտայի իշխանական և ընդդիմադիր թևերի միջև կնքվում են բազմակողմ համաձայնագրեր, համատեղ մշակվում են ժողովրդավարական քաղաքական համակարգի կայացման նոր կանոններ և ընթացակարգեր: Այս առումով, ինչպես նշել է Ա. Պշևորսկին, առավել վտանգավոր է այն, որ քաղաքական դաշտի հիմնական խաղացողների միջև առկա «էլիտաների պակտը» վերածվի «կարտելային համաձայնության»: Վերջինս սահմանափակում է մրցակցությունը, լրացուցիչ արգելքներ է սահմանում քաղաքական այլ ուժերի առողջ մրցակցություն իրականացնելու համար, որոնք դուրս են մնում այդ «կարտելային համաձայնություններից», իսկ քաղաքական իշխանության ռեսուրսները միմիայն յուրայինների միջև են բաշխվում[13]:

Այսպիսով, համաշխարհայնացման պայմաններում հասարակության զարգացմանը կարող է նպաստել միայն քաղաքական որոշումների ընդունման գործընթացում քաղաքացիների ներգրավվածությունը, առանց որի հնարավոր չէ ապահովել ժողովրդավարական արժեքների և նորմերի ամբողջությունը: ՀՀ քաղաքական համակարգի ժողովրդավարացման համատեքստում մասնակցության ինստիտուցիոնալացման ու մասնակցային մշակույթի զարգացման և ամրապնդման գործոնները համախմբված ժողովրդավարության հաստատման կարևոր նախադրյալներ են: Վերջինս հասարակության մեջ ապահովում է քաղաքացիավարական մրցակցությունն ու համագործակցությունը, որոնց առկայության և գործարկելիության պայմաններում միայն հնարավոր կլինի ձևավորել կայուն և զարգացած հասարակություն:

Բանալի բառեր – *մասնակցային մշակույթ, քաղաքական համակարգի փոխակերպում, կոնվենցիոնալ և ոչ կոնվենցիոնալ մասնակցային գործողություններ, ցանցային մասնակցություն, մասնակցության ինստիտուցիոնալացում, քաղաքացիական գիտակցություն, քաղաքացիական ակտիվիզմ, կաղրային քաղաքականություն, որոշումների ընդունում*

АРНАК САРГСЯН – *Особенности проявления политического участия в Республике Армения.* – Исследование вопросов политического участия подтвердило, что его культура решающим образом влияет на создание демократической системы и общественного доверия, а также эффективную государственную политику с точки зрения профессионального управленческого аппарата. Активное участие граждан в принятии политических решений – один из

[13] Տե՛ս **Пшеворски А.** Демократия и рынок. Политические и экономические реформы в Восточной Европе и Латинской Америке, РОССПЭН, М., 2000, էջ 134:

ключевых принципов демократического правления и гражданского общества. Поэтому следует способствовать активному участию каждого гражданина в общественной и политической жизни; только посредством активного участия можно сформировать культуру диалога власти и народа.

Ключевые слова: *культура участия, трансформация политической системы, конвенциональные и неконвенциональные действия участия, сетевое участие, институционализация участия, гражданское сознание, гражданская активность, кадровая политика, принятие решений*

ARNAK SARGSYAN – *The Peculiarities of the Manifestation of Political Participation in the Republic of Armenia.* – The study of the issues of political participation in the article substantiated that the participatory culture has a decisive influence on the establishment of a democratic political governance system, both in terms of public trust and effective state policy in terms of replenishing professional staff in the state apparatus. Active participation of citizens in the political decision-making process is one of the main principles of democratic governance and civil society. Therefore, it is necessary to promote the active participation of every member of society in public and political life, as only with active participation, it becomes possible to form a dialogue between the government and the people.

Key Words: *participatory culture, transformation of the political system, conventional and non-conventional participatory actions, network participation, institutionalization of participation, civil consciousness, civic engagement, personnel policy, decision-making*

Ներկայացվել է՝ 17.02.2020, Գրախոսվել է՝ 16.04.2020, Ընդունվել է տպագրության՝ 24.07.2020